



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Հուլիսի երկրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հուլիսի երկրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր է եղել նորմայից 2-3 աստիճանով:



Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 15-ին, 20-ին. Տավուշում գրանցվել է +29...+34°C Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +24...+26°C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +33...+36°C, նախալեռնային շրջաններում՝ +25...+27°C, Շիրակում՝ +24...+29°C (Աշոցք՝ +23°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +28...+30°C (Հանքավան՝ +24°C), նախալեռնային շրջաններում՝ +31...+33°C, Գեղարքունիքում՝ +24...+27°C, Լոռիում՝ +25...+29°C, Արմավիրում՝ +34...+36°C, Արարատում՝ +35...+37°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +24...+25°C, նախալեռներում՝ +29...+34°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում +12...+14°C (Դիլիջան՝ +6°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +7...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+17°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+18°C, նախալեռնային շրջաններում՝ +7...+10°C, Շիրակում՝ +2...+6°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +2...+7°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+13°C, Գեղարքունիքում՝ +4...+9°C, Լոռիում՝ +3...+8°C, Արմավիրում՝ +10...+14°C, Արարատում՝ +14...+17°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +2...+5°C, նախալեռներում՝ +10...+12°C:

### Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 11-22մմ (60-138%), Լոռիում՝ 10-26մմ (56-125%), Տավուշում՝ 5-10մմ (41-63%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 7-18մմ (31-83%), նախալեռներում՝ 3-5մմ (26-89%), Գեղարքունիքում՝ 3-14մմ (28-112%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 5-14մմ (50-117%), նախալեռներում՝ 2մմ (27%), Արմավիրում՝ 2-9մմ (50-225%), Արարատում՝ 4-7մմ (71-233%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 9մմ (98%), նախալեռներում տեղումներ չեն դիտվել, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 1-21մմ (36-175%), նախալեռներում՝ 19-45մմ (357-365%):

### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը




Հուլիսի երկրորդ տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +2...+7°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի նախալեռներում՝ +9...+13°C, Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +15°C աստիճան:

# Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային փոխալների (հուլիսի երկրորդ փասնօրյակ)



Ելնելով FAO պաշտոնական կայք էջում տեղադրված VHI-ի քարտեզից՝ հանրապետության շրջանների մեծ մասում գրանցել է բուսականության բարվոք պայմաններ, բացառությամբ Արարատյան դաշտի, Տավուշի և Սյունիքի որոշ հովտային հատվածների, որտեղ վեգետացիոն ցուցիչը ցածր է:

**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**



## **Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները**

Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական մշակաբույսերի աճը, զարգացումը և դաշտային աշխատանքները: Հովտային և նախալեռնային շրջաններում կատարվել է պտղատուների, հացահատիկային մշակաբույսերի բերքահավաք:



### **Հացահատիկային մշակաբույսեր**

Նախալեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ աշնանացան ցորենը լրիվ հասունացել է, լեռնային շրջաններում աշնանացանը շարունակել է գտնվել կաթնային և մոմային հասունացման փուլերում, իսկ հովտային շրջաններում կատարվել է բերքահավաք:

*Բերքահավաքը ցանկալի է կատարել սեղմ ժամկետներում: Ուշացնելու դեպքում հատիկները թափվում են հասկերից, որի հետևանքով նկատվում է բերքի կորուստ:*

## Եգիպտացորեն



Նախալեռնային շրջաններում շարունակվել է եգիպտացորենի հուրանակալումը, բույսի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 90-136սմ, տասնօրյակային աճը՝ 4-8սմ է:

Դրության գնահատականը լավ է:

## Պղպարուներ



Լեռնային շրջաններում շարունակվել է պղպարուների հասունացումը, նախալեռնային և հովտային շրջաններում կատարվել է բերքահավաք:

Եղանակային պայմանները նպաստավոր էին պղպարուների հասունացման և շաքարային նյութերի կուտակման համար:



## Կարտոֆիլ

Լեռնային շրջաններում կարտոֆիլը ծաղկել է, նախալեռնային շրջաններում ծաղկումն ավարտվել է: Կարտոֆիլի մոտ տեղի է ունենում պալարագոյացում: Եղանակային պայմանները նպաստավոր էին պալարագոյացման համար: Ջարգացման այս փուլում բույսի պահանջը խոնավության նկատմամբ ավելանում է: Հովտային շրջաններում դիտվել է վերգեղնյա մասի թառամում:

Կարտոֆիլի դրության գնահատականը լավ է:

### **Խոտաբույս, ծխախոտ**

Լեռնային շրջաններում կատարվել է կորնգանի առաջին հունձ:

Հովտային շրջաններում կատարվել է առվույտի երկրորդ հունձ, դիտվել է ծխախոտի տերևների տեխնիկական հասունացում:



Եղանակային պայմանները նպաստավոր էին հասունացման, բերքահավաքի և տերևների չորացման համար: